



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Համաձայնությունն առանց համագործակցության

Հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտը մեկ անգամ եւս արեւելեց: Քաղաքական դաշտը բացարձակ բեւեռացվեց, հստակորեն բաժանվեց սեւերի եւ սպիտակների: Թողնելով այն պատրվակները, որոնց հետեւանքով ստեղծվեց այս ցնցումային կացությունը, հարկ է նշել, որ ստեղծված ծայրահեղ բեւեռացված մթնոլորտը դեռեւս առկա էր Երեւանի քաղաքապետի ընտրությունների քարոզարշավի ընթացքում եւ իր տրամաբանական ավարտին հասավ արդյունքները հրապարակելուց հետո:

Քաղաքագիտական վերլուծությամբ՝ բնական պետք է համարել, երբ բացարձակ հաղթանակ ապահոված որեւէ ուժ փորձում է ձեռքբերել իր հետ իշխանությունը կիսող կցորդ ուժերից: Հենց դա էլ տեղի ունեցավ հոկտեմբերի 2-ին: Հարցը ոչ թե որեւէ օրենքի ընդունումն էր, այլ քաղաքականության մեջ տիրող տրամաբանությունը: Սակայն պետք է կշռադատել, որ այս տրամաբանությամբ առաջնորդվելով որպէս երկիր եւ հասարակություն՝ շահում ենք, թե՞ տուժում: Չէ՞ որ մայիսին ձեւավորվել էր համաձայնության կառավարություն: Թվում էր, թե ատելությունն ու քաղաքական մենաշնորհն ավարտվել են, եւ զգացվում էր միասնաբար երկրի ապագան կառուցելու եռանդ ու խանդավառություն:

Հայ իրականության մեջ բոլոր քաղաքական ուժերը, ընկալելով ստեղծված քաղաքական իրողությունը, միանշանակ համոզված են, որ Հայաստանում պետք է տեղի ունենան Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: Սակայն, նախքան արտահերթ ընտրությունների անցկացումը պետք էր ստեղծել այնպիսի պայմաններ, որ չկրկնվեն նախորդ սխալները, այլ խոսքով՝ բարեփոխվեն Ընտրական օրենսգիրքը, կուսակցությունների մասին օրենքը եւ այլ անհրաժեշտ պայմաններ ապահովվեն: Դռները բաց էին, եւ ինչպէս Արմեն Ռուստամյանն է ասում՝ «չարժեք բաց դռնից շարժելով ներս մտնել»: Եղավ այն, ինչ եղավ... Թերեւս սա կլինէր բոլորի շահից բխող արտահերթ ընտրությունների անցկացման ուղին, եւ հենց այստեղ էր, որ բացարձակ մեծամասնություն ունեցող ուժը պետք է ինչ-որ տեղ նեղկուսակցական շահը գիշեր հանրային շահին:

Այժմ արդեն Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրաժարական է տվել, եւ շուտով ԱԺ-ին է ներկայացվելու նոր Ընտրական օրենսգիրք, որտեղ ըստ երեւույթին ներառվել են խորհրդարանական ուժերի համարյա բոլոր տեսակետները եւ, փաստորեն, ՀՀ ԱԺ ընտրությունները տեղի են ունենալու դեկտեմբեր ամսվա առաջին կեսին: Բնական է, որ այս ընտրություններին եւս, ինչպէս Երեւանի համայնքային ընտրություններում, բացարձակ մեծամասնությունը առանց ծրագրային դրույթների ծանոթանալու կամ անգամ լսելու քաղաքական ուժերի մոտեցումներն ու հայեցակարգերը, իրականությունից կտրված՝ իր քվեն տալու է գործող իշխանությանը, որը տիրացել է թե իշխանական եւ թե ծայրահեղ ընդդիմադիր ընտրազանգվածին:

Ինչպէս բազմիցս շեշտվել է, մայիսին ստեղծված ժողովրդի խանդավառությունն ու ապագայի նկատմամբ հույսը չպետք է մսխել: Ինչպէս հեղափոխության հիմնական առաջնորդող կարգախոսն է՝ սիրո եւ համերաշխության մթնոլորտում պետք է ձեւավորել իշխանություն երկրի զարգացումն ու բարգավաճումն ապահովելու համար: Դժբախտաբար, անցած շուրջ 4 ամիս գոյատեւած Համաձայնության կառավարությունը չկարողացավ ստեղծել այդ մթնոլորտը: Արդյունքում՝ Համաձայնության կառավարության տապալողը միայն մեկ ուժի գերիշխանությունն էր, համագործակցության բացակայությունը:



Բերքի տոն Ստեփանակերտում

Արդեն ութերորդ տարին է, ինչ հոկտեմբերի երկրորդ կիրակին Արցախում նշում են Գյուղատնտեսության աշխատողի մասնագիտական օրը, որն ուղեկցվում է Բերքի տոնով:

Հանրապետության հրապարակում դեռ նախօրեին տեղադրվել են տաղավարներ, որտեղ Արցախի բոլոր շրջաններից ժամանած ներկայացուցիչները, ՀՀ-ում ու ԱՀ-ում գործող մի շարք ընկերություններ ներկայացրել եւ վաճառքի են հանել իրենց բերք ու բարիքը:

Բերք ու բարիքն օրհնել է Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Բերքի տոնին ներկա էին ԱՀ Նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանը, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ՀՀ-ում Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր:

«Այս տոնակատարությունը նախորդներից տարբերվում է նրանով, որ ներգրավվել են ավելի շատ մասնակիցներ: Բացի Վերածննդի հրապարակից, փառատոնի տաղավարներ են տեղադրվել նաեւ ԱՀ Նախագահի նստավայրին եւ կառավարության շենքին հարակից փողոցներում եւ ընդգրկել Թումանյան փողոցը: Այս տարի ներկայացվել է 1000-ից ավելի մասնակից՝ նախորդ տարվա 850-ի փոխարեն», - նշել է ԱՀ գյուղատնտեսության փոխնախարար Վիլեն Ավետիսյանը:

Տոնավաճառի ընթացքում եղել են նաեւ անակնկալներ՝ «Լավագույն շրջան», «Լավագույն վերամշակող կազմակերպություն», «Լավագույն մշակութային կատարում» եւ «Ամենացածր գին» անվանակարգերով մրցույթի տեսքով: Վերջին անվանակարգն ավելացել է այս տարի: Այդ նպատակով ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք արձանագրում են նախապես համարակալված բոլոր տաղավարների գները: Ամենացածր գներ առաջարկող երեք տաղավարներ արժանանալու են թանկարժեք նվերների:

Բերքի տեղափոխման համար

գյուղնախարարությունը տրամադրել է դիզվառելիք: Չնայած անկալվում էր, որ Բերքի տոնին գյուղմերքը շուկայական գներից անհամեմատ էժան է լինելու, սակայն որոշ սպառողներ դժգոհում էին, որ գները շատ քիչ են տարբերվում շուկայականից:

Բացի շրջանների գյուղական համայնքներից բերված բերք ու բարիքից, տեղական արտադրության մթերքների ցուցադրությունից, փառատոնին ներկայացվել է նաեւ հայկական մշակույթն իր բազմազանությամբ:

Ազգային երգ ու պարը ապահովել են ինչպէս շրջանները ներկայացնող կատարողները, այնպէս էլ «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պետական համույթը, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները, Արցախի պարի պետական համույթը, «Արցախի ձայներ» երաժշտական խումբը եւ «Մանկական եվրատեսիլ 2018» երաժշտական մրցույթում Հայաստանը ներկայացնող փոքրիկ արցախցի L.E.V.O.N-ը:


Շահումյանի շրջան. 2018թ. կատարվածն ու նախանշված ծրագրերը



ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամները հոկտեմբերի 10-ին այցելել են Շահումյանի շրջան եւ արտագնա նիստ ունեցել Զարվաճառ քաղաքում՝ շրջվարչակազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսյանի մասնակցությամբ:

Կարողացե՛ք 2-րդ էջում

Շառլ Ազնավուր. 1924-2018



Նշանավոր ֆրանսահայ շանտոնյե, երգիչ, երգահան, կինոդերասան եւ հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը (իսկական անունը՝ Շահնուր Վաղինակ Ազնավուրյան) ծնվել է 1924թ. մայիսի 22-ին Փարիզում, հայ գաղթականներ Միքայել եւ Զնար Ազնավուրյանների ընտանիքում:

Կարողացե՛ք 3-րդ էջում

Շահումյանի շրջան. 2018թ. կատարվածն ու նախանշված ծրագրերը



ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամները հոկտեմբերի 10-ին այցելել են Շահումյանի շրջան և արտագնա նիստ ունեցել Զարվաճառ քաղաքում՝ շրջվարչակազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսյանի մասնակցությամբ:

Առիթից օգտվելով՝ «Ապառաժ»-ը հարցազրույց է ունեցել Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար, դաշնակցական, Շուշիի ազատագրման մասնակից, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Գագիկ Մարտիրոսյանի հետ, ով այս պաշտոնը ստանձնել է սույն թվականի հունիսի 23-ին:

Շահումյանը բազմազավակ ընտանիքների մեծաթիվ շրջան է համարվում: Ի՞նչ ծրագրեր են իրականացվում շրջանում ծնելիության և բազմազավակության խթանման նպատակով:

Ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների իրականացման նպատակով Շահումյանի շրջանի բոլոր համայնքներում իրականացվել է ուսումնասիրություն: Շրջան ունի 72 բազմազավակ ընտանիք, 2019-ին բազմազավակ ընտանիքների թիվը կավելանա են 8-ով: Այդ ընտանիքների համար առաջնահերթ խնդիր է բնակարանով ապահովելու հարցը: Ընդհանուր առմամբ՝ բնակարանով ապահովվել են 39 ընտանիք, 8 ընտանիքի համար կառուցվում են բնակարաններ: Կատարվել է շինարարական աշխատանքների 65%-ը: Ծրագիրն ընթացքի մեջ

է, նախատեսվում է բնակարանով ապահովել 24 ընտանիքի:

Ի՞նչ փուլում է այլ սոցիալական խմբերին պատկանող ընտանիքների բնակելի տների վերանորոգման և կառուցման հարցը:

Շրջանում շատ են նաև սոցիալապես անապահով խմբերին պատկանող ընտանիքները, որոնք հնարավորություն չունեն սեփական միջոցներով լուծել իրենց բնակարանային խնդիրները: Այդ նպատակով ուսումնասիրվել է Շահումյանի շրջանի քաղաքացիների 224 դիմում, եւ 16 ընտանիքի տրամադրվել է անհրաժեշտ շինանյութ՝ բնակարանային պայմանները բարելավելու նպատակով: Անբարենպաստ եղանակի հետեւանքով շրջանում վնասված 9 տներին նույնպես տրամադրվել են անհրաժեշտ շինանյութեր:

Շրջանում հրատապ լուծում պահանջող հարցերից մեկը դպրոցաշինությունն է: Ի՞նչ անելիքներ ունեք այս ուղղությամբ:

Շրջանի բնակչության առջև ծառայող կարեւորագույն խնդիրներից է կրթության մակարդակի բարձրացումը: Անհրաժեշտություն կա թե՛ բարելավել դպրոցների շենքային պայմանները, թե՛ լրացնել անհրաժեշտ մասնագետների պակասը:

Դպրոցաշինությունը շրջանում իրականացվում է պետական աջակցության եւ բարերարների միջոցներով: 2018-ի՝ կառավարության կապիտալ շինարարության եւ վերանորոգման աշխատանքների ծրագրում ներառվել է Շահումյանի շրջանի Զարեքտար գյուղի դպրոցի շենքի կառուցումը: շինարարության մեկնարկը տրված է եւ կատարված է ընդհանուր աշխատանքների 20%-ը: Բարերար Գեորգ Բարսեղյանի շնորհիվ հիմնովին վերանորոգվել է Նոր Էրեքեի միջնակարգ դպրոցը: Ավարտվել են 2ուարի դպրոցի ներքին հարդարման աշխատանքները:

Աշխատանքներն ընթանում են, սակայն շրջանի կրթական հաստատություններից 3-ը դեռևս գտնվում են անբավարար վիճակում. անհրաժեշտություն կա գալիք տարվա ծրագրում ներառել Նոր Խարխափուտ համայնքի Նոր դպրոցի կառուցման, Նոր Մանաշիդ համայնքի դպրոցի 4 դասասենյակների կառուցման, Ակնաբերդ համայնքի դպրոցի վերանորոգման աշխատանքները, Նոր Դարաչինարի եւ Եղեզնուտի դպրոցներում ջեռուցման համակարգի

ներդրման հարցերը:

Բացի շենքային պայմաններից, շրջան ունի նաև մասնագետների խնդիր: Շրջանում առկա է 50 մանկավարժի թափուր հաստիք: Կացարանների բացակայության պատճառով հնարավորություն չունենք համարել հաստիքները:

Ի՞նչ վիճակում են շրջանի հասարակական և վարչական նշանակության օբյեկտները:

Ընթացքի մեջ են հասարակական և վարչական նշանակության օբյեկտների շինարարական աշխատանքները:

Մասնավորապես, Շահումյանի շրջանի Նոր Խարխափուտ գյուղի ոստիկանական կետին կից կառուցվել է Նոր տաղավար, ծրագրում ներառվել է նաև Նոր սանհանգույցի կառուցումը:

Զարվաճառ քաղաքում կառուցման ընթացքի մեջ է հանդիսությունների սրահը. կատարվել է աշխատանքների 70%-ը:

2018 թվականի ծրագրում ներառվել են նաև դատախազության աշխատասենյակի նորոգումը, Դաղիվանքի համայնքապետարանի շենքի տանիքի եւ շրջվարչակազմի շենքում սանհանգույցի կառուցումը:

Շրջանի 12 համայնքներում չկան մշակույթային օջախեր. ակումբները տեղակայված են կամ դպրոցի, կամ համայնքապետարանի շենքում:

Շրջանի 12 համայնքներում բացակայում է բուժօգնության համար նախատեսված առանձին շինությունները, 4 համայնքում կա վերանորոգման անհրաժեշտություն:

Զարվաճառ քաղաքում անհրաժեշտություն է առաջացել կառուցելու նաև մանկապարտեզ, իսկ Ակնաբերդ համայնքում կա մանկապարտեզի շենքի վերանորոգման խնդիր:

Ավտոճանապարհների վերակառուցման, վերանորոգման հարցը թերեւս առկա է Արցախի բոլոր շրջաններում: Ինչպիսի՞ն է պատկերը Շահումյանում:

Շահումյանի շրջանի միջհամայնքային ճանապարհներն անբավարար են, համահունչ չեն շրջանի բնակչության զարգացմանը: Կարելի է ասել, որ բնակչությունը հետընթաց զարգացում է ապրում: Շրջանի առաջնային խնդիրը մնում է վարդենիս-Մարտակերտ միջպետական մայրուղուց Զարվաճառ տանող՝ 18 կմ ճանապարհահատվածի ասֆալտապատումը:

2018-ին կատարվել է 37 կմ միջհամայնքային ճանապարհների պահպանման աշխատանքներ, վերակառուցվել է Նոր Գետաշեն գյուղի հետիոտն կամուրջը:

Բացվել է Բերձոր-Զարվաճառ ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհ, ընթացքի մեջ են ճանապարհի բարեկարգման աշխատանքները: Ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի վրա ներկայումս աշխատում է շինարարների երկու խումբ: Առաջին արդեն բարեկարգել է մոտ 20 կմ ճանապարհ Բերձոր-Վարդուտ հատվածում: Երկրորդ խումբն աշխատում է Զարվաճառ-Յայթաղ հատվածում: Շինարարները հասցրել են իրականացնել հողային աշխատանքներ, լուծել ջրահեռացման խնդիրները. տեղադրվել են խողովակներ, բացվել փոսորակներ: Նախատեսվում է նաև բացել 35կմ Զարվաճառ-Վարդենիս ավտոճանապարհը:

Ջրամատակարարման և ջրահեռացման հարցն ի՞նչ վիճակում է:

Շահումյանի շրջանը կարելի է համարել Արցախի թերեւս ամենաջրառատ շրջանը, սակայն շրջանի 13 համայնքներում բացակայում է ջրամատակարարման ցանցը, ինչը կարող է բնակչության շրջանում բազում հիվանդությունների հիմք հանդիսանալ: Այդ իսկ պատճառով՝ անհրաժեշտություն կա 2019-ի ծրագրում ներառել 13 համայնքների ջրամատակարարման ցանցի հիմնովին վերակառուցումը՝ բնակչության սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու նպատակով:

Պետական բյուջեի հաշվին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի զարգացման ծրագրով այժմ իրականացվում է Զարեքտար գյուղի արտաքին ջրամատակարարման ցանցի կառուցումը. կատարվել է աշխատանքների 80 %-ը: Վերակառուցվել է նաև Զարվաճառ քաղաքի որոշ հատվածների ջրամատակարարման համակարգը: Նախատեսվում է Նոր Գետաշեն համայնքի՝ աղետի պատճառով ավերված ձախափնյա թաղամասի 1 կմ երկարությամբ ջրագծի վերակառուցումը:

Այնուհանդերձ, շրջանն դեռևս ունի բազում չլուծված խնդիրներ, որոնց մի մասը ուսումնասիրման փուլում է, մյուս մասն էլ կլուծվի ըստ անհրաժեշտության:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Արեւային ջրատաքացման համակարգը՝ ժամանակի պահանջ

ՀՀ Արցախի կենտրոնական կոմիտեի միջոցով կյանքի կոչված սոցիալական հանձնախմբի նախաձեռնությամբ եւ ՀՀ Արեւմտյան Ամերիկայի «Արմեն Գարո» կոմիտեի «Երկիր» հանձնախմբի հովանավորությամբ Մարտունու շրջանում տեղադրվել է 28 այլընտրանքային ջրատաքացման համակարգ, որից 18-ը՝ Մարտունու քաղաքում, 10-ը՝ համայնքներում:

Ջրատաքացման համակարգի տեղադրումից շուրջ մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 12-ին, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԱՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Իշխանյանը, ԱՀ Էկոնոմիկայի նախարար Լեւոն Գրիգորյանը, Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Միքայիլ Օհանյանը, Մարտունու քաղաքապետ Միքայիլ Խաչատրյանը եւ «Արմի Սոլար» ընկերության տնօրեն Չավեն Սարգսյանը հանդիպել եւ այցելել են շահառուներին, լսել նրանց արձագանքները եւ մտքեր փոխանակել ծրագրի շուրջ:

Դավիթ Իշխանյանը նշել է. «ՀՀ ԿԿ-ում ծավալված քննարկումների արդյունքում որոշվեց նախապատվություն տալ սոցիալական այնպիսի խմբերի, որպիսիք են՝ զոհվածների, հաշմանդամների եւ բազմազավակ ընտանիքները: Այլընտրանքային ջրատաքացուցիչների շնորհիվ այս ընտանիքները տարվա կտրվածքով կխնայեն զգալի գումար՝ հաշվի առնելով առկա գազի եւ էլեկտրաէներգիայի սակագները»:

Արինա Ալլախիբերդյանն անչափահաս 8 զավակների մայր է: Նախքան ջրատաքացման համակարգին անցնելը՝ ամառային շրջանում էլեկտրաէներգիայի համար

վճարում էին շուրջ 8000 ՀՀ դրամ. տեղադրումից հետո մեկ ամսվա գումարը կազմեց 2500 ՀՀ դրամ.

«Ջրատաքացուցիչների տեղադրումը մեծ աջակցություն է մեր ընտանիքին: Ամուսնուս աշխատավարձը,



երեխաների նպաստը եւ մեղվաբուծությունից ստացված գումարը հազիվ է հերիքում մեզ, եւ էլեկտրաէներգիայից տնտեսված գումարով մի հոգս հաստատ կլուծենք: Շնորհակալ ենք բարերարներին», - նշել է Արինան:

«Արմի սոլար» կազմակերպության ջրատաքացուցիչները տարվա բոլոր եղանակներին կարողանում են արել լույսից կլանված էներգիայի շնորհիվ ջուրը տաքացնել 55-ից մինչեւ 60 աստիճան: Ընկերության տնօրեն Չավեն Սարգսյանի խոսքով՝ ոլորտի զարգացման խթանումը երկրի տնտեսության զարգացման եւ բնակչության կենցաղային բարելավման լուրջ հեռանկարներ է խոստանում. «Արեւային ջրատաքացման համակարգին անցնելով՝ հնարավոր է ընդհանուր առմամբ 90 տոկոսով տնտեսել Արցախի բնակչության կողմից էլեկտրաէներգիայի եւ գազի համար ծախսվող գումարների չափերը: Բացի այդ, համակարգը կարող է բարձրացնել էներգետիկ անվտանգության մակարդակն ու Էկոլոգիապես մաքուր էներգիայի աղբյուր լինել: Ի տարբերություն բնական գազի՝ այն բնապահպանական խնդիրներ չի ստեղծի», - նշել է Չ.Սարգսյանը եւ նշել, որ ջրատաքացուցիչները շահառուներին 25 տարի ապահովելու են տնտեսական նշանակության տաք ջրով:

«Բարեգործական այս ծրագիրը նպաստում է մի շարք խավերի սոցիալական բեռի թեթեւացմանը: Բացի 28 ընտանիքներից՝ Մարտունու, հարակից գյուղերի եւ այլ շրջանների բնակիչները եւս ունեն այս համակարգի նվիրատվության կարիքը: Արեւային ջրատաքացման համակարգը ժամանակի պահանջ է», - իր խոսքում նշել է Մարտունու քաղաքապետ Միքայիլ Խաչատրյանը:

«ԱՊՈՍՏ»

Շառլ Ազնավուր. 1924-2018



Նա հպարտանում էր իր հայկական ծագմամբ, մշտապես սատար կանգնում էր Հայաստանին. «Ես ինձ, իհարկե, հայ եմ զգում, քանի որ հայկական ընտանիքում եմ մեծացել, բայց առաջին բառերս ֆրանսերեն են հնչել: Հետագայում արդեն ես, քույրս եւ աղջիկս հայերեն սովորեցինք: Ես լավ խոսում, բայց ո՛չ գրում եմ, ո՛չ էլ կարդում եմ հայերեն: Հոգ չէ: Վերջիվերջո, իմ նախնիները, ովքեր դարձրել են հաճախել, դրանից ավելի վատ հայեր չեն եղել: Իսկ ո՞վ ասաց, թե լեզուն գոյություն ունի միայն գրքերում»:

1988թ. սպիտակյան ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո հիմնադրել է «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամը: Հայկական թեմաներով են նրա «Եթե համար, Հայաստան», «Նրանք ընկան» (Ցեղասպանության վաթսուամյակին), «Ինքնակենսագրություն», «Քնքուշ Հայաստան» երգերը: Դստեր՝ Սեդա Ազնավուրի հետ հայերեն կատարել է Սայաթ-Նովայի «Աշխարհումս» երգը: 1964, 1996 եւ 2006 թվականներին համերգներ է տվել Հայաստանում: Գյումրիում կանգնեցված է Ազնավուրի արձանը, նրա անունով է կոչվում Երեւանի հրապարակներից մեկը, Ստեփանակերտի մշակույթի կենտրոնը:

2009թ. մայիսի 4-ից ժնեի ՄԱԿ-ի գրասենյակում ու այլ միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչն է: 2009թ. մայիսի 5-ից՝ Շվեյցարիայի Զամադաշնուրում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանը:

Ազնավուրն ամուսնացել է երեք անգամ. առաջին անգամ տանյութամյա Միշելին Ռյուգելի հետ (1946 թվականի մարտի 16), երկրորդ անգամ Էվելին Պլեսիսի հետ (1955 թվականի հոկտեմբերի 28) եւ երրորդ անգամ շվեյցարի Ուլլա Տոքսելի հետ (1967 թվականի հունվարի 11): Այս ամուսնությունների արդյունքում ունեցել է 6 երեխա՝ Սեդան, Շառլը, Պատրիկը, Կատյան, Միշան եւ Նիկոլան:

Աշխարհահռչակ հայը կյանքից հեռացել է 94 տարեկանում, 2018թ. հոկտեմբերի 1-ին:

Շառլ Ազնավուրի մահվան կապակցությամբ Հայաստանում եւ Արցախում հոկտեմբերի 6-ին սուգ է հայտարարվել:

Նրա հոգեհանգստի արարողությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 5-ին Փարիզի «Հալմանդամների պալատում» (Hotel des Invalides), որին ներկա էին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, տիկին Բրիջիտ Մակրոնը, Ֆրանսիայի նախկին նախագահներ Նիկոլա Սարկոզին եւ Ֆրանսուա Օլանդը, Ֆրանսիայի վարչապետ Ֆիլիպ Էդուարդը, Ֆրանսիայի հասարակական, քաղաքական, մշակութային հայտնի գործիչներ, Ֆրանսիայի հայ համայնքի ներկայացուցիչներ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ տիկին Աննա Հակոբյանը, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի, տիկին Նունե Սարգսյանի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ նույնպես ներկա են գտնվել աշխարհահռչակ հայագի շանսոնյեի հոգեհանգստի արարողությանը:

Ֆրանսիայի Ազգային Գվարդիայի նվագախմբի կատարմամբ նախ հնչել են Հայաստանի եւ Ֆրանսիայի ազգային օրհներգերը, որից հետո վարչապետ Փաշինյանը եւ Էմանուել Մակրոնը մոտեցել են Շառլ Ազնավուրի ընտանիքի անդամներին ու իրենց ցավակցությունները հայտնել նրանց:

Շառլ Ազնավուրի անունը ոսկե տառերով է գրվել համաշխարհային երգարվեստի մեջ. Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյան:

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը հոկտեմբերի 2-ին Շառլ Ազնավուրի մահվան կապակցությամբ ցավակցական հեռագիր է հղել նրա ընտանիքին:

Հեռագրում ասված է.

«Խոր ցավով տեղեկացա մեծանուն հայ, ֆրանսահայ նշանավոր երգիչ, երգահան, գրող, կինոդերասան եւ հասարակական գործիչ, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրի մահվան մասին:

Աշխարհահռչակ շանսոնյեի մահը մեծ կորուստ է մեր ժողովրդի համար: Իր անմահ արվեստի միջոցով Ազնավուրն աշխարհին էր ներկայացնում Հայաստանն ու համայն հայությանը: Օրհասական պահերին նա միշտ հարազատ ժողովրդի կողքին էր, անում էր հնարավորը համազգային խնդիրների լուծման գործում իր անգնատեղի ավանդը բերելու ուղղությամբ:

Արցախի ժողովրդի, իշխանությունների եւ անձամբ իմ անուկից խորին ցավակցություն ու զորակցություն եմ հայտնում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին, մեր ողջ ժողովրդին, նրա անզուգական արվեստի բոլոր երկրպագուներին:

Շառլ Ազնավուրի անունը ոսկե տառերով է գրվել համաշխարհային երգարվեստի ու հայ ժողովրդի պատմության մեջ, եւ նրա պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում»:

Ես կորցրի իմ լավագույն բարեկամներից մեկին. Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյան.

Նախագահ Արմեն Սարգսյանը ցավակցական ուղերձ է հղել Շառլ Ազնավուրի մահվան կապակցությամբ. «Անասելի ցավ պարեցի ծանր հարվածից՝ Ազնավուրն այլևս չկա...»

Համայն մարդկությունը կորցրեց 20-րդ դարի ամենազգայուն հոգիներից մեկին:

Գրեթե մեկ դար զլորած բեմի հսկան դեռես զսպանակի նման պիրկ ու ամուր էր լուսարձակների առջև, նրա անկրկնելի ձայնը դեռես փոթորկում էր մարդկային հոգին, պատանիներն ու երիտասարդները, արդեն ճերմակած նրա միլիոնավոր երկրպագուները վարակվում էին կյանքի այն լուսավոր սիրով, որ ճառագու՛մ էր Հավերժի այդ ճամփորդից:

Մեզնից հեռացավ Հայը, ով միայն ֆիզիկապես էր գտնվում հայրենիքից դուրս. Հայրենիքը նրա մեջ էր, նա՛ Հայրենիքը...

Ես կորցրի իմ լավագույն բարեկամներից մեկին, ում հետ յուրաքանչյուր հանդիպում յուրահատուկ էր իր ջերմությամբ ու անջնջելի տպավորությամբ...

Սակայն դու միշտ մեզ հետ ես, սիրելի Շառլ, քո ժողովրդի հետ, քո Հայաստան եւ Ֆրանսիա հայրենիքների հետ...

Անկեղծորեն ցավակցում եմ եւ վշտակցում Շառլ Ազնավուրի ընտանիքին, հարազատներին, մերձավորներին, Հայաստանի ու Ֆրանսիայի ժողովուրդներին, Ազնավուրի արվեստի միլիոնավոր երկրպագուներին:

Ճամփորդ լույս, Շառլ...»:

Նրա ձայնը ջերմացրեց նույնիսկ ամենասառը սրտերը. Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյան.

«Ուր տասնամյակ Շառլ Ազնավուր անունը ժպտ է փորագրել միլիոնավոր դեմքերի վրա, արագացրել կամ դանդաղեցրել տասնյակ միլիոնավոր մարդկանց շնչառությունը, փայլ է ներարկել հարյուր միլիոնավոր աչքերի մեջ:

Եվ այս անունը 2018 թվականի հոկտեմբերի 1-ին մի պահ կանգնեցրեց երկիր մոլորակի եւ միջազգային կյանքի ընթացքը՝ մի անամոքելի թախիժ վրձնելով հարյուր միլիոնավոր մարդկանց դեմքերին:

Շառլ Ազնավուրի նախնիները Հայոց ցեղասպանությունից մազապուրծ դեգերեցին աշխարհում եւ, ի վերջո, հանգրվանեցին հարյուր հազարավոր հայերի օթեւան ու հույս տված Ֆրանսիայում, որտեղ էլ ծնվեց Վաղինակ Ազնավուրյանը, որ հետո պիտի դառնար մեծն Շառլ Ազնավուր:

Կրելով անասելի դժվարություններ, Վաղինակ-Շառլը ի վերջո գտավ իր կոչումը, բայց այդ կոչումին, բացի իրենից, չէր հավատում ոչ ոք: Բոլորը նրան համոզում էին, բացատրում, որ բեմն իր գործը չէ, երգելն իր կոչումը չէ, որ ճակատագիրն առանց այն էլ շռայլ է գտնվել իր նկատմամբ՝ իր ծնողին փրկելով ցեղասպանության աղետից:

Բայց Վաղինակ Ազնավուրյանին կարեկցանք չէր հարկավոր, այլ առաքելություն, եւ նա գիտեր իր առաքելությունը, եւ այդ առաքելությունը Շառլ Ազնավուր դառնալու աներեւակայելի ճանապարհն էր: Եւ նա երգեց ու գրեց, եւ նա գրեց ու երգեց դատարկ եւ կիսադատարկ դահլիճներում, եւ նա երգեց անհոգնել ու աննահանջ եւ մարդկությանը տվեց ժամանակ՝ հասկանալու եւ գիտակցելու, որ մի մեծ աստղ է ծագել համաշխարհային մշակույթի երկնակամարում, որ դեռ մի քանի տասնյակ տարիներ պետք է «պայթեցնի» աշխարհի ամենահեղինակավոր դահլիճները:

Եւ նրա ձայնը տարածվեց աշխարհի բոլոր կողմերում, հասավ ամենահեռավոր երկրներ եւ ջերմացրեց նույնիսկ ամենասառը սրտերը»,- հոգեհանգստի արարողության ժամանակ նշել է Նիկոլ Փաշինյանը:

Ֆրանսիայում պոետները չեն մահանում, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Էմանուել Մակրոն.

«Շառլ Ազնավուրի ստեղծագործությունները մեզ գտնում ենք ամենաանկապին, ամենահարազատ երգերը: Նա մեզ պարեցրել է իր երգերով: Հայկական ծագում ունեցող ներգաղթյալի որդին պետություն էր պետության մեջ, հայրենիք՝ հայրենիքի մեջ:

Նրա միջոցով այսօր առիթ է հիշելու, թե մենք՝ որպես ազգ, որքան պարտական ենք բոլոր այն հայերին, ովքեր ստիպված լքեցին իրենց երկիրը եւ նրան ապաստան գտնելու մեջ մտա: Սա ընդհանուր ճակատագիր է: Բոլոր երկրների հայեր, այսօր իմ մտքում դուք եք:

Թո՛ղ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ բարեկամությունն արժանի լինի նրա տված դասերին:

Վաստի եւ, որ դեռ շատ երկար տարիներ միլիոնավոր մարդիկ դժվարության, հույսի, ուրախության պահերին իրենց հիշողության մեջ կպահեն այն երաժշտությունը կամ այն երգերի բառերը, որ այս բացառիկ բանաստեղծը թողել է մեզ: Յուրաքանչյուրիս սրտում նա կշարունակի իր ճանապարհը՝ քայլելով ուղիղ, մեծքը գրպանում, ժպիտը դեմքին, եւ մեզ հետ միասին նա հպարտորեն կանցնի այս դարը: Այլևս նա մեզ չի լքի, որովհետեւ Ֆրանսիայում պոետները երբեք չեն մահանում»,- իր ելույթում նշել է Ֆրանսիայի նախագահը:

Ապրելով հայրենիքից դուրս՝ մշտապես եղել է իր հայրենիքի ու ժողովրդի հետ. Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարար Լեւոնիկ Հովհաննիսյան.

«Խորը ցավով ու փստոսանքով ընդունեցի աշխարհահռչակ շանսոնյե, մեծագույն հայ Շառլ Ազնավուրի մահվան լուրը:

Տաղանդավոր երաժիշտ, դերասան, կոմպոզիտոր, մեծ հայրենասեր Շառլ Ազնավուրը տարիներ շարունակ եղել է հայերի ու Հայաստանի դեսպանը ինչպես մշակույթի, այնպես էլ քաղաքականության ոլորտում: Ապրելով հայրենիքից դուրս՝ մշտապես եղել է իր հայրենիքի ու ժողովրդի հետ՝ կիսելով նրա վիշտը, դժվարություններն ու հաջողությունները:

Նրա՝ օրինակելի հայի ու մեծ երաժշտի կերպարը դեռ հայի շատ սերունդներ կղաստիարակի, իսկ նրա արվեստը, թեւածելով հայրենիքից դուրս, հայ ազգի ու հայոց մշակույթի մասին կպատմի օտարներին:

Ցավակցում եմ ողջ հայությանը՝ անդառնալի մարդկային մեծ կորստի համար»:

«ԱՊՐԱՍԺ»

Բանակցություններ հոտնկայս, կամ՝ երկնքից ընկած երեք խնձոր

Կռահեցիք: Խոսքս, այո, վերաբերում է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևի հանդիպմանը Տաշիկստանի մայրաքաղաք Դուշանբեում՝ ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի նիստի օրը՝ սեպտեմբերի 28-ին: Անկախ նիստի օրակարգային հարցերից եւ ընդունված որոշումների կարելությունից՝ գազաթնամուղովի մասնակիցների եւ, մասնավորապես, միջոցառումը լուսաբանող լրագրողների ուշադրության կենտրոնում այլ իրադարձություն էր՝ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների հանդիպումը: Դա, փաստորեն, Փաշինյան-Ալիևի երկրորդ հանդիպումն էր: Առաջինը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել այս տարվա ամռանը՝ Մոսկվայում, ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի բացման հանդիպմանը արարողությունը, որտեղ նրանք ընդամենը ծանոթացել են հյուրընկալ տանտիրոջ՝ Ռուսաստանի նախագահի ներկայացմամբ, բավարարվելով միայն սովորական բարեկի փոխանակմամբ եւ ոչ ավելին: Սակայն, ի տարբերություն առաջինի, երկրորդ հանդիպումն անհամեմատ բովանդակալից էր, թեկուզեւ, ինչպես տեղեկանում ենք լրահոսից, տեւել է ընդամենը մեկուկես րոպե: Ադրբեջանական մամուլի պնդմամբ՝ հանդիպումը փաստորեն նախածնունդ է Հայաստանի վարչապետը եւ առաջինը մոտեցել Ադրբեջանի նախագահին: Մինչդեռ ահա հակառակն է պնդում ռուսաստանյան «Կոմերսանտ» պարբերականը՝ նշելով, որ Ադրբեջանի նախագահն ինքն է շտապել հասնել իրենից առաջ քայլող՝ Հայաստանի վարչապետին, որից հետո նրանք սկսել են ոչ միայն միասին հատել դահլիճ տանող ճանապարհը, այլեւ նույնիսկ գրուցել: Ռուսական լրատվամիջոցի դիտարկմամբ՝ նրանք այնքան էին տարված գրուցումով, որ անգամ լուսանկարվելու արարողությունը, կանգնած լինելով կողք կողքի, շարունակում էին գրուցել: Ըստ երեւույթին, եզրակացնում է «Կոմերսանտ»-ի հեղինակը, Իլիհամ Ալիևն ասելու բան ուներ գրուցակցին, իսկ Նիկոլ Փաշինյանը՝ լսելու: Անձամբ ես կարծում եմ՝ երկու գրուցակիցներն էլ իրար թե ասելու եւ թե լսելու բան ունեին:

Ինչպես հետո պարզվեց Հայաստանի վարչապետի ֆեյսբուքյան «ուղիղ եթերից» եւ Ադրբեջանի ԱԳՆ մամուլի հաղորդագրությունից՝ այդ հպանցիկ գրուցի ընթացքում ձեռք բերվեցին որոշակի պայմանավորվածություններ սահմանագծում լարումը նվազեցնելու եւ միջադեպերը կանխելու, բանակցային գործընթացի նկատմամբ հավատարմությունը պահպանելու, կողմերի միջեւ օպերատիվ կապ ստեղծելու վերաբերյալ: «Ես ուրախ եմ եւ հույս ունեմ, որ այդ պայմանավորվածությունները կպահպանվեն, քանի որ դրանց պահպանումը չափազանց կարեւոր է», - ասել է Հայաստանի վարչապետը:

Ինչ խոսք, ականջահաճո է արձանագրել խիստ կարճատեւ գրուցի ընթացքում ձեռք բերված նման կարեւոր պայմանավորվածությունները, որոնք հեքիաթների ավարտին սովորաբար երկնքից ընկնող երեք խնձորն են հիշեցնում, մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին եւ մեկն էլ ուտողին: Բայց հեքիաթը՝ հեքիաթ, մինչդեռ իրական կյանքն այլ բան է հիշեցնում:

Բանն այն է, որ Բաքուն քանի անգամ, մանավանդ 2016-ի ապրիլյան իր անփառունակ արկածախնդրությունից հետո, խոստացել էր դադարեցնել կրակոցները շփման գծում, տեղադրել դիտարկման տեխնիկական միջոցներ, ընդլայնել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմը: Վերհիշենք այդ կարգի պայմանավորվածությունները Վիեննայում, Սանկտ-Պետերբուրգում, որոնք ձեռքբերումը ոչ թե մեկ կամ երկու րոպեի, այլ շահագրգիռ կողմերի միջեւ անհամեմատ տեսական բանակցությունների, միջազգային միջնորդների համառ հորդորների ու ջանքերի արդյունք էր: Եվ ի՞նչ: Պարզապես ոչինչ: Ավաղ, սայլն այսօր էլ տեղից չի շարժվում: Այո, նույն Իլիհամ Ալիևը կտրականապես հրաժարվում է կյանքի կոչել իր իսկ տված նախագահական խոստումները: Իրոք նա այսօր պատրաստ է Դուշանբեում հպանցիկ ասված իր խոստման տերը լինել: Ադրբեջանի նախագահը՝ խաղաղության աղավաղի: Թեկուզ այսօրվապես: Եթե ոչ մենք, ապա օտարները, համոզված եմ, կարող են ապշել մեր այդ անհիմն ու աններելի, ինչո՞ւ չէ, այո, վտանգավոր միամտությամբ:

Իրոք որ հեքիաթ է: Մինչդեռ իրական կյանքն ահա այլ խնձորներ է մատուցում մեզ՝ նույնպես երկինք հատող ու երկնքից ընկնող, բայց ամենեւին էլ ոչ հեքիաթային խնձորներ: Մետաղակուռ խնձորներ՝ առանձնապես եւ առաջին հերթին՝ շփման գծում Արցախի խաղաղություն-

ընդ գիշեր ու գոր աչալուրջ հսկող, պաշտպանող մեր դիրքապահ զինվորների համար:

Ահավասիկ, Արցախի պաշտպանության նախարարության վերջին շաբաթվա ամփոփագրերը: Պարզվում է, որ սեպտեմբերի 23-29-ը ընկած ժամանակահատվածում ադրբեջանական կողմը հակամարտ գործերի շփման գոտում հրադարձարի պահպանման ռեժիմը խախտել է ավելի քան 230 անգամ՝ հայ դիրքապահների ուղղությամբ արձակելով շուրջ 3000 կրակոց, իսկ սեպտեմբերի 30-ից մինչեւ հոկտեմբերի 6-ը, այսինքն՝ նշված պայմանավորվածություններին հաջորդած օրերին՝ շուրջ 150 անգամ՝ արձակելով ավելի քան 1000 կրակոց: Ընդ որում, երկու դեպքում էլ՝ տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից:

Ավելին, ադրբեջանական զինուժի՝ սեպտեմբերի 17-ից 22-ն անցկացված լայնածավալ զորավարժությունների ավարտից հետո, որոնք իրականացվել են շփման գծի անմիջական հարեանությամբ, Բաքուն տակավին հապաղում է իր գործերը հեռացնել դեպի մշտական տեղակայման վայրեր: Ըստ երեւույթին՝ սպասում են Արցախի ուղղությամբ «Կրակ» հրամանին: Առավել եւս, որ այդ զորավարժությունները, ինչպես հայտարարվել է նախապես, անցկացվել են՝ որպես Արցախի դեմ պատերազմի վերսկսման նախապատրաստության վճռական փուլ: Միեւնույն ժամանակ, ՀՀ-ի համակարգի միջոցով հսկողություն սահմանելով Արցախի ողջ օդային տարածքի նկատմամբ, Բաքուն, ինչպես վերջերս հայ-



տարարել է այդ հանրապետության պաշտպանության նախարարությունը, սպառնում է անհապաղ չեզոքացնել, այսինքն՝ ոչնչացնել «հակառակորդի ցանկացած օդային միջոց, որը կփորձի մոտենալ ադրբեջանական բանակի առաջավոր դիրքերին»: Խոսքը, դժվար չէ կռահել, վերաբերում է ոչ միայն հայկական ռազմական, այլեւ քաղաքացիական ավիացիային:

Միանգամայն վերջերս էր. Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվում էր Միսկում: ՀՀ-ի եւ ԵԱՀԿ գծով բեյառուս գործընկերների հետ կայացած հանդիպումների ընթացքում հայ խորհրդարանականները բարձրացրել են նաեւ Բեյառուսից Ադրբեջանին մատակարարվող արդիական սպառազինության հարցը՝ շեշտելով, որ Բաքուն զանգվածային ոչնչացման այդ զինատեսակները գնում է ինչպես Արցախի, նույնպես եւ Հայաստանի դեմ կիրառելու նպատակով: Բայց ո՞ւմ են ասում: Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը հազիվ տուն էր վերադարձել, իսկ Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլ ծառայությունը նույն այդ օրերին ցնծագին հաղորդում է, որ Լուկաշենկոյի մահաբեր գեներալների խմբաբանակը հասել է Բաքու: Հենց այդպես էլ վերնագրված է հաջորդական լրատվական կայքի հրապարակումը՝ «Լուկաշենկոյի մահաբեր գեներալները հասել է Բաքու»: Խոսքը բեյառուսական արտադրության «Պոլոնեզ» տիպի 301 միլիմետրանոց օպերատիվ-մարտավարական հրթիռային համակարգի մասին է, որը, ըստ Բաքվի տեղեկատվության, իր հարվածային ուժով հավասարագոր է «Իսկանդեր»-ին:

Եվ ապա, ինչպես օրերս հայտնել է «Գոլոս Արմենիի» թերթի հեղինակ Էդուարդ Ավետյանը «Հայ-ադրբեջանական դիմակայության մեջ հայտնին անհայտի մասին» հրապարակման մեջ, Թուրքիան եւ Ադրբեջանը ձեռնարկում են քայլեր, որոնք ի գործ են սասանել Հարավային

Կովկասում տիրող փխրուն իրավիճակը: «Առանձնապես Թուրքիան, որը ձգտում է առավել ակտիվ մասնակցություն ունենալ մեր տարածաշրջանի գործընթացներում, կարող է դառնալ այնպիսի հակամարտությունների արագացուցիչ՝ կատալիզատոր, որն ունակ է պայթեցնելու խաղաղությունը ոչ միայն Հարավային Կովկասում», - գրում է հեղինակը: Մեր գրչակից ընկերոջ խոսքով՝ դրա վկայությունն են Հարավային Կովկասում Թուրքիայի արդեն իսկ ձեռնարկած գործողությունները, որոնց մասին, ինչպես Անկարային է թվում, հայտնի չէ շահագրգիռ կողմերին: Հոգվածագրի հաղորդմամբ՝ ոչ մի տեղ չի հիշատակվում, որ Նախիջեանում արդեն դեֆակտո լուծված է թուրքական ռազմակայանի հարցը: Բանն այն է, ասում է նա, առաջին տարին չէ, ինչ Թուրքիան իր ռազմակայանն է ստեղծել Նախիջեանում, որտեղ տեղակայված է թուրքական բանակի հատուկ նշանակության երկու գումարտակ, որոնք վերահսկողություն են ադրբեջանական զինուժի համագետստով: Բացի այդ, թուրքական հատուկ նշանակության եւս երկու գումարտակ պարբերաբար հայտնվում է Նախիջեանում՝ մասնակցելով բազմաթիվ զորավարժանքների: Հեղինակի խոսքով՝ «Ենթադրվում է, որ երբ Ադրբեջանը, ինչ-ինչ երեւութական երաշխիքներ ստանալով ՀԱՊԿ կողմից չմիջամտելու կամ «երեք ժամով» նրա ուշացման մասին, հարձակման անցիկ ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի դեմ, ապա թուրքական հատուկ նշանակության գումարտակները կդառնան այն ուժը, որը Նախիջեանից կճեղքի հայկական պաշտպանությունը, կշարժի ոչ միայն դեպի Երեւան, այլեւ կկտրի Լեռնային Ղարաբաղ տանող ճանապարհը»:

Միեւնույն ժամանակ, նշում է հոդվածի հեղինակը, իրականում Ադրբեջանը մտադիր է օգտագործել, ինչպես Բաքվին է թվում, ամենից հզոր ու ռազմատեսչ այնպիսի մի կառույց, որն իբր թե ունակ է առհասարակ ոչնչացնել հայկական բանակը, կոտորել բոլորին ու զավթել հայկական քաղաքներն ու գյուղերը՝ դրանք ստանալով որպես ռազմավար: Խոսքն «Իսլամական պետություն» կոչեցյալ ահաբեկչական միավորման մասին է եւ դրան հոգեհարազատ այնպիսի կառույցների, ինչպիսիք են «Ալ-Բախրա»-ի հետ կապված «Տաքիատ ան-Նուսրի»-ն եւ մյուս այլ հրոսակախմբերը: Արդեն առաջին ամիսը չէ, ինչ Թուրքիան Ադրբեջանի խնդրանքով սիրիական Իդլիբից իսլամական գրոհայիններին հանում է, շատ հաճախ նրանք ընտանիքների հետ միասին, իր տարածքով տեղափոխում է Նախիջեան: Նրանց թիվը, հեղինակի տվյալներով, հասել է մի քանի հարյուրի, եթե ոչ ավելի: Ընդ որում՝ գրոհայինների մեջ քիչ չեն Հյուսիսային Կովկասից եկած բնիկները: Նրանք փոխադրվում են նաեւ Արցախի սահման, որտեղ, այսպես կոչված, «հարվածային բռունցք» կդառնան, երբ որ Ադրբեջանը կսկսի մարտական գործողությունները: Նրանց հետ միասին հայկական դիրքերը կգրոհեն նաեւ, ըստ Բաքվի աղբյուրների, Պակիստանից բերված եւ արդեն Ադրբեջանում գտնվող հատուկ նշանակության ստորաբաժանումները:

Մի խոսքով, կարելի է ենթադրել, կրտսեր Ալիևը փորձում է կրկնել հանգուցյալ հոր կոպիտ սխալը, որի համար, ասում են, վերջինս զղջացել է սաստիկ: Եթե հիշում եք՝ Հեյդար Ալիևը նույնպես մեծ հույսեր էր կապում աֆղանցի մոջահեդների ու չեչեն գրոհայինների հետ՝ մտածելով, որ, ի տարբերություն իր վախկոտ ու անողնաշար հայրենակիցների, նրանք անհամեմատ մարտունակ են, բավական թրծված ու փորձառու դարձած աֆղանական եւ չեչենական պատերազմների թոհուրոհում, հետեւապես ունակ են մեկ հուժկու հարվածով ջարդելու արցախահայության ողնաշարը: Բայց եղավ այն, ինչ եղավ: Մարտադաշտ հանված հազարավոր աֆղանցի ու չեչեն վարձկանները ոչ միայն խայտառակ պարտություն կրեցին՝ բախվելով հայ ազատամարտիկների կուռ ու անսասան պատնեշին, այլեւ գլխացավանք դարձան իրավիճակը կողմի՝ Ադրբեջանի իշխանությունների համար, անձամբ՝ նախագահ Հեյդար Ալիևի համար: Արդյոք, նույն խոր հիասթափության ու զղջանքի զգացումը չի սպասում նաեւ նրա նախագահ որդուն՝ Իլիհամ Ալիևին: Հաստատապես՝ այո: Զանգի, ինչպես 20-րդ դարավերջին մեր քաջազուն տղաներն էին, նույնքան ու նույնիսկ առավել քան մարտունակ ու խիզախ են շփման գծում մարտական հերթափոխի կանգնած նրանց զավակները՝ Հայաստանի եւ Արցախի սահմանագծերում ամուր, անսասան պատնեշված 21-րդ դարասկզբի հայ դիրքապահները:

Սրբոց Թարգմանչաց տոն

Սբ. թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Զեյթրողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն

Ճանաչել գիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

(Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը)

Յուրաքանչյուր ազգի «Տոն եւ հիշատակի օրերի մասին» օրենքները ուսումնասիրելով, կարելի է հստակ պատկերացում կազմել տվյալ ազգի հոգեկերտվածքի, հոգեբանության, իղծերի, նպատակների, անցյալի եւ ներկայի մասին: Երջանկահիշատակ հայ հանրաճանաչ լեզվաբան, բանասեր-մատենագետ Ռաֆայել Իշխանյանի կարծիքով՝ մենք՝ հայերս, չորս մեծ տոն ունենք՝ երկուսը հոգեւոր, մեկը աշխարհիկ, մեկն էլ ե՛ւ հոգեւոր, ե՛ւ աշխարհիկ: Մեր հոգեւոր երկու մեծ տոներն են՝ Զիսուսի Ծնունդը եւ Զարոյությունը, աշխարհիկը՝ Մայիսի 28-ը, իսկ ե՛ւ հոգեւոր, ե՛ւ աշխարհիկ տոնը Թարգմանչաց տոնն է:

Սուրբ թարգմանիչ վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենավերջին եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Զայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ» եւ տոնվում է Զոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի, եւ նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Զեյթրողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու», որը շարժական է եւ տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից մինչեւ նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում:

Այս տարի այն տոնվում է Թարգմանիչ ընդհանուր անվան տակ. հայտնի են Ս. Մեսրոպ Մաշտոցին եւ Ս. Սահակ Պարթևին աշակերտած շուրջ հարյուր սաներ:

Ո՛չ ոք չի կարող ժխտել, որ մեր պատմության ամենանշանակալի իրադարձությունը հայերեն նշանագրերի ստեղծումն է կամ հայ գրերի գյուտը, գյուտը մեր ինքնության պահպանման բանալու, որով բացում կամ փակում ենք հայ ազգի հավերժության դուռը: Զայոց այբուբենի տառերը կոչվել են նաեւ զինվորներ:

Մաշտոցը, լինելով նախկին զինվորական, Կորյունի խոսքերով՝ «Իր սուրբ աջով, հայրաբար ծնեց հայոց նշանագրերը», ստեղծեց երեսուկվեց անխոնջ ու զգոն զինվորներից բաղկացած մի ամբողջ զորք, որը դարեր ի վեր պահպանում է մեր հայ հոգու սահմանները օտար մտազավթիչներից, որով մենք կրկին ու կրկին վերանվաճում ենք մեր վստահությունն ու հավատն առ Աստված, քանզի հայերեն գրերի գյուտից հետո էր, որ Աստծո հոսքը իրապես դարձավ մերը, իսկ մենք վստահորեն դարձանք Նրանը՝ Զրիստոսինը:

Զրիստոսությունը որպես պետական կրոն ընդունելուց ավելի քան մեկ դար հետո էլ Զայոց վանքերում եւ եկեղեցիներում հոգեւոր արարողություններ էին կատարվում, ընթերցվում էր Սուրբ Գիրքը, սակայն ժողովրդի մեծ մասի համար անհասկանալի լեզուներով՝ ասորերեն կամ հունարեն: Այդ պատճառով էլ Աստծո խոսքը մնում էր անհասանելի:

Սկզբնական շրջանում կային հատուկ թարգմանիչ-

ներ, որոնք արարողությունների ժամանակ Սուրբ Գրքի հատվածները բանավոր թարգմանում էին հայերեն: Սակայն դա բավարար չէր: Այս խնդրի շուրջ մտահոգված էր Սբ. Մեսրոպ Մաշտոցը: Զայոց զրկված էր Սուրբ Գիրքն ընթերցելու եւ ճշմարտությունն ու փրկությունը ձեռք բերելու հնարավորությունից: Նա անընդհատ մտածում էր Սուրբ Գիրքը հայերենի վերածելու գաղափարի շուրջ, որի իրականացման համար էլ դիմում է Զայոց կաթողիկոսին՝ Ս. Սահակ Պարթևին եւ մեծ ընդունելություն գտնում: Պարզվում է, որ կաթողիկոսը նույնպես մտահոգված էր այդ հարցով: Նրանց ծրագրերին իր հավանությունն է տալիս նաեւ թագավորը՝ Վռամշապուհ Արշակունին:

Մաշտոցը, իր հետ վերցնելով իր աշակերտներին, գնում է Ասորիքի Միջագետք, լինում Եդեսիայում, ուր եւ



տեղի է ունենում ամենամեծ հրաշքերից մեկը. «Մեսրոպյան ապավինեց Աստծուն պահքով ու աղոթքներով: Եվ Աստված, որ կատարում է իրենից երկյուղ կրողների կամքը, լսում է Մեսրոպի աղոթքները եւ ցույց տալիս նրան գրերը սքանչելի տեսիլքով, եւ ոչ թե երագի մեջ քնած ժամանակ, այլ արթուն աչքով իմանալի եւ աչքի տեսանելիքով զգալի: Մեսրոպը տեսնում է, որ աչ ձեռքի դաստակով գրում է վեմի վրա, որը դրված էր նրա առջեւ: Եվ գրի փորվածքն այնպիսին էր, ինչպիսին ձեռքն էր ձեւ տալիս վեմի վրա. եւ գրերի տարբերություններն ու անունները ձեւավորվում էին Մեսրոպի մտքում» (Մ. Խորենացի «Զայոց պատմություն»):

Ունենալով հայ նշանագրերը՝ Ս. Մեսրոպը Զոռփա-նոսի հետ սկսում է ձեւավորել դրանք: Ստանալով արդեն գրելու պատրաստ տառերը՝ Ս. Մեսրոպյան առաջին անգամ թարգմանում է Ս. Գրքի հետեւյալ տողը. «Ճանաչել գիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» («Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը»), որը վերցրել էր Սողոմոնի «Առակաց» գրքից: Ահա սա էր, որ եղավ առաջին հայատառ նախադասությունը՝ գրված հայ ուսուցչի ձեռքով: Բացահայտ մի իմաստություն, որով բոլորի համար հասկանալի պետք է դառնար խոսքը եւ Գիրքն ընթերցելու

անհրաժեշտության գաղափարը եւ ոչ միայն: Այս Աստվածատուր նվերից հետո Ս. Մեսրոպը վերադառնում է Զայաստան՝ հետը բերելով մի անգին գանձ, որը լինելու էր հայ ժողովրդի հետագա դարերի մաքառման գեղքը, ինչպես նաեւ նրա գոյատևման առիվատու զանգ: Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ջանքերով Զայաստանում սկսվում են բացվել դպրոցներ, ուր ուսուցանվում են հայ գրերը: Նրանք իրենց աշակերտների հետ ձեռնամուխ են եղել Սուրբ Գրքի ամբողջական թարգմանությունը, որ մշակումներով ու լրացումներով տեսել է շուրջ 30 տարի: Ս. Սահակ Պարթևն ու Ս. Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին ու Զովսեփ Պաղունացին, Կորյունը, Ղեւոնդ Վանանդեցին եւ մյուսներն իրենց հոգու ամբողջ ջերմությունը ներդրեցին, իրենց հոգին նվիրեցին Աստվածաշնչի թարգմանության սրբազան գործին: Նրանց անկրկնելի թարգմանության շնորհիվ Աստվածաշնչի հայերեն օրինակը բոլոր ազգերի կողմից անվանվեց թարգմանությունների թագուհի:

Թարգմանիչների մասին պատկերավոր է գրել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Զայրապետը. «Անցել են հազարավոր տարիներ, բայց նրանք չեն մահանում, կենդանի են եւ կենդանի պիտի մնան, որովհետեւ ապրել են հավատով, գործել անմահության եւ անմահացնելու գաղափարով:

Ինչո՞ւ էր սուրբ Մեսրոպը երկրե երկիր ընկել, ինչ ո՞ւ էր այս ու այն դռները ծեծում, որպեսզի յուր ազգի համար անմահության դուռ բացվի: Ինչո՞ւ էր սուրբ Սահակը տանջվում, տքնում, գիշերվա լույսը ցերեկի հետ խառնում՝ Սուրբ Գիրքը թարգմանելով. որովհետեւ հավատում էր անմահության գաղափարին յուր եւ յուր ազգի համար: Ինչո՞ւ բարսեր Վռամշապուհը յուր գանձի դռները բացած օգնության էր հասնում հայ գրի գյուտի հաջողությանը, դպրոցների բացմանը. որովհետեւ հավատում էր անմահության գանձի գոյության եւ լուսո թագավորության մշտնջենավորության՝ ավելի զորավոր՝ ազգի պահպանության եւ ապագայի համար, քան արդեն ձեռքված յուր թագավորությանը:

...Այս նույն հավատով են գործել, աշխատել, աղոթել նարեկացիներն ու շնորհալիները, որոտնեցիներն ու տաթեւացիները եւ նույն գաղափարի համար բազմաթիվ գործողները, որոնց դեմքերը նկարված են հայ պատմության երկնակամարի վրա, լուսավոր աստղերի վրա:

Բայց անմահ են ոչ միայն մեծ հոգիները, այլեւ յուրաքանչյուրը, որ հավատում է յուր կոչմանը՝ համեստ շրջանակի մեջ անգամ: Կենդանարար աղբյուրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք հոսում են իրենց հովիտներով եւ առատություն եւ կենդանություն պարգևում իրենց ափերին, կաթիլներից են բաղկացած: Ապա ուրեմն, ամենքն իրենց տեղն ունեն ըստ չափի եւ կարողության: Ժողովուրդն է կենդանի ծառի արմատը ու բունը, որ ծաղիկներ եւ պտուղ է տալիս»:

Գարեգին Ա Կաթողիկոսի վերոնշյալ տողերը ոչ միայն գնահատական է Սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Զեյթրողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Կլայեցու եւ մյուսների կատարած աշխատանքների, այլեւ պատգամ յուրաքանչյուր հայի համար: Ամեն մի հայ, ուր էլ լինի, պետք է մասնակցի հայության պահպանության սուրբ գործին՝ ըստ իր չափի եւ կարողության:

Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆ

Ամփոփվեցին թիվ 2 ընտրատարածքի արտահերթ ընտրությունների արդյունքները



2018թ. հոկտեմբերի 7-ին անցկացված՝ ԱԶ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրությունների արդյունքներով 1070 կողմ ձայներով թիվ 2 ընտրատարածքում Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել Արամ Ալեքսեյի Սարգսյանը:

Ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանը հանձնաժողովի անունից շնորհավորել է Արամ Սարգսյանին եւ նրան հանձնել Ազգային ժողովի պատգամավորի վկայական:

Թիվ 2 ընտրատարածքում ԱԺ մեծամասնական կարգով լրացուցիչ ընտրություններին մասնակցում էին 9 թեկնածուներ, որոնցից առաջին երեք տեղերը զբաղեցրել են՝ Արամ Սարգսյանը 1070, Տիգրան Պետրոսյանը 898, Արթուր Ամիյանը 550 ձայներով:

Այլոնա Գրիգորյանը, ում թեկնածությունը պաշտպանում էր ԶԶ Դաշնակցություն կուսակցությունը, զբաղեցրել է 5-րդ տեղը 289 ձայնով:

Ո՞վ է Ջորջ Սորոսը



Կյանքը, ֆինանսական գործունեությունը

Ես երբեք չեմ խաղում մեկ կանոնի շրջանակներում, ես միշտ փորձում եմ փոխել խաղի կանոնները՝ դրանք հարմարեցնելով ինձ:

Ֆինանսական շուկաներն ինձ համար եղել են ինչ-որ լաբորատորիա, որտեղ ես փորձարկում էի փիլիսոփայական տեսությունները: Ինչպես տեսնում եք, շատ փորձարկումներ բավականին հաջող էին:

Այս խոսքերը պատկանում են հրեական ծագմամբ հունգարա-ամերիկացի բիզնես մագնատ, ներդրող, քաղաքական ակտիվիստ, բարերար Ջորջ Սորոսին, ում անունը մշտապես քննարկման առարկա է և ես հաճախ է շոշափվում «գունավոր» ու «թավշյա» հեղափոխությունները հովանավորելու առումով: Դժվար է այդ խոսակցություններին ու պնդումներին միանշանակ պատասխան տալ, բայց ուսումնասիրելով Սորոսի գործունեությունը՝ կարելի է որոշակի պատկերացում կազմել տվյալ իրադարձություններին նրա դերակատարության մասին:

Ջորջ Սորոսը ծնվել է Բուդապեշտում, 1930 թվականին: Լինելով ազգությամբ հրեա՝ նա ստիպված է լինում ընտանիքի հետ կեղծ փաստաթղթերով տեղափոխվել Անգլիա՝ գերմանական հետապնդումներից խուսափելու համար: 1947 թ. Սորոսն

ընդունվում է Լոնդոնի տնտեսագիտության դպրոց՝ ստանալով նախ բակալավրի որակավորում, ապա նաև՝ փիլիսոփայության մագիստրոսի գիտական աստիճան: Այստեղ նրան դասավանդել է հայտնի փիլիսոփա Կառլ Փոփերը, որը մեծ ազդեցություն է ունեցել Սորոսի աշխարհայացքի ձևավորման վրա: Սորոսի կյանքի նպատակն է Փոփերի՝ երկրի վրա բաց հասարակություն հիմնելու գաղափարը: Եվ հենց այս նպատակով էլ նա ողջ աշխարհում ատեղծել է բազմաթիվ բարեգործական կազմակերպություններ:

Իր ընկերոջ հրավերով նա մեկնում է ԱՄՆ եւ զբաղվում ֆինանսական գործունեությամբ:

Նախքան իր առաջին ֆոնդը հիմնելը (Double Eagle, 1969 թթ), նա իր բիզնես կարիերան սկսել է տարբեր աշխատանքներ կատարելով նախ Անգլիայի, ապա ԱՄՆ-ի առևտրային բանկերում: Իր առաջին ֆոնդերից ստացված եկամուտներով 1970 թվականին ստեղծեց երկրորդ ֆոնդը՝ Սորոս ֆոնդ Մենեջմենթը: «Double Eagle»-ն անվանափոխվեց «Quantum Fund»-ի: Հիմնադրման պահին «Quantum Fund»-ն ուներ կառավարման տակ գտնվող 12 մլն դոլար ակտիվներ, իսկ արդեն 2011 թվականին այն կազմում էր 25 միլիարդ դոլար: Սորոսը հայտնի է որպես «Մարդ, որը կտրեց Անգլիայի բանկը», քանի որ 1992 թվականին իր 10 մլրդ դոլարի կարծ վաճառքը հանգեցրեց Մեծ Բրիտանիայում տեղական արժույթի (Ֆունտ ստերլինգ) ճգնաժամին: Ծգնաժամը, որից նա 1 մլրդ դոլարի շահույթ ստացավ, հայտնի է «Սեւ չորեքշաբթի» անունով:

Սորոսի ֆինանսական կարիերայում եղել են ե՛լ վերելքներ, ե՛լ վայրէջքներ: Այսպես, «խաղաղով» Ֆորթես շուկայում 1992 թվականի սեպտեմբերին ֆունտ/դոլար փոխարժեքի վրա, մի քանի օրվա ընթացքում նա աշխատում է 2 մլրդ դոլար: Մյուս կողմից, 2000 թվականի աշնանը, ԱՄՆ-ում արժեթղթերի շուկայի «անկումից» հետո, նա կորցնում է մոտ 3 մլրդ դոլար:

Սորոսի ֆինանսական հաջողությունները

րի վերաբերյալ կան երկու հիմնական տեսակետներ: Առաջինի համաձայն՝ նա իր հաջողություններով պարտավոր է ֆինանսական կանխատեսումների շնորհին: Երկրորդ տեսակետով՝ իր կարեւոր որոշումները կայացնելիս Սորոսն օգտվում է աշխարհի խոշորագույն երկրների քաղաքական եւ ֆինանսական շրջանակների տրամադրած տեղեկատվությունից: Ինքը՝ Սորոսը, իր հաջողություններն այլ կերպ է մեկնաբանում՝ ՉԼՄ-ների միջոցով հանրային կարծիքի վրա ազդեցություն, իրեն ցանկալի տրամադրությունների, ակնկալիքների ձեւավորում: Իսկ քանի որ ակնկալիքը հոգեբանական հատկանիշ է, այն կարող է տեղեկատվական ազդեցության ենթարկվել:

Բաց հասարակություն հիմնադրամ
2018թ. սկզբների տվյալներով՝ 88-ամյա միլիարդատեր, բարերար եւ Բաց հասարակություն հիմնադրամի հիմնադիր Ջորջ Սորոսն ունի 8 մլրդ դոլար, այն բանից հետո, երբ նա 18 մլրդ դոլար նվիրաբերեց իր Բաց հասարակություն բարեգործական հիմնադրամին:

Բաց հասարակություն առաջին հիմնադրամը նա ստեղծել է 1979թ. ԱՄՆ-ում: Այժմ աշխարհի 25 երկրներում գործում են այդ հիմնադրամները: Բաց հասարակություն հիմնադրամը, որն առավել հայտնի է որպես Սորոսի հիմնադրամ, Հայաստանում իր գործունեությունն սկսել է 1997 թվականից: Հիմնադրամի գրանտներն ուղղվում են մի քանի թիրախային խմբերի՝ քաղաքացիական հասարակություն, մեդիա, կանանց իրավունքներ, կրթություն, հանրային առողջություն եւ այլն:

Նա տարեկան միջինը 300 մլն դոլար է հատկացնում հասարակական, շահույթ չիտապնդող ծրագրերի իրականացման համար:

Միլիարդատերը մշակել է ֆունդային շուկաների ռեֆլեքսիվության մասին տեսակետ, որը բացատրում է նրա ունեցվածքի տպավորիչ աճը: Ֆինանսական գործունեության ոլորտում իր գաղափարների մասին նա գրել է «Ֆինանսների ալքիմիա»

ն», «Համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը» եւ այլ գրքեր:

Քաղաքական գործունեությունը
Քաղաքական քննադատում Սորոսն իրեն դրսևորել է որպես հովանավոր եւ ազդեցիկ լոբբիստ: 1979 թվականից Սորոսն Արեւմտյան Եվրոպայի երկրներում ակտիվորեն ֆինանսավորում էր ժողովրդավարական շարժումները՝ Լեհական Համերաշխություն, Չեխոսլովակիայում հարտիա 77 շարժումը, ինչպես նաև՝ Անդրեյ Սախարովի շուրջ համախմբված այլախոհ խմբավորումներին: Նա կարեւոր դեր է խաղացել Եվրոպայի «թավշյա» հեղափոխություններում: Սորոսն ազդեցիկ դերակատարություն է ունեցել նաև վրացական «վարդերի հեղափոխության» նախապատրաստման եւ իրականացման գործում, չնայած նա անձամբ պնդում է, որ իր դերակատարությունը մամուլը չափազանցել է:

ԱՄՆ-ում Սորոսը մեծ ակտիվություն է ցուցաբերել 2004թ. նախագահական քաղաքացիական ժամանակ՝ ավելի քան 23 մլն դոլար ծախսելով Բուշ-կրտսերի վերընտրման դեմ, որում անհաջողություն կրեց:

Ջորջ Սորոսը համարվում է «կոնգրեսում թմրաբիզնեսի օրինականացման գլխավոր լոբբիստը»: Այսպես, 2010թ. հոկտեմբերին Սորոսը 1 մլն դոլար տրամադրեց «DPA» կազմակերպությունը, որը պայքարում էր ԱՄՆ-ում կանեֆի օրինականացման համար: Մինչ այդ նա հովանավորում էր նմանատիպ այլ կազմակերպություններին:

Սորոսի հովանավորած կազմակերպությունները փորձում են հասնել մեկ միասնական աշխարհի ձեւավորմանը, որտեղ բնականաբար տեղ չունեն ավանդական արժեքները, իսկ մարդու իրավունքները գերակայում են ազգային-քաղաքական հարցերի նկատմամբ: Ներկայումս մի շարք երկրներում արգելված է Սորոսի հիմնադրամի գործունեությունը:

Պատրաստեց Տաթևիկ Աղաջանյանը

Ժան Ալմուխյան. 18 կգ կշռով գործունեությունը՝ Հայաստանին



Կոմպոզիտոր, դիրիժոր, Արգենտինայի Բուենոս Այրեսի «Արաքս» երեմնի երգչախմբի ղեկավար, 100-ից ավելի երաժշտությունների հեղինակ եւ մշակ, Արգենտինայի կոմպոզիտորների միության անդամ, 86-ամյա Ժան Ալմուխյանը սեպտեմբերին ժամանել էր Հայաստան՝ երաժշտությունները, ձայնապնակները, աֆիշները, մամուլի անդրադարձները՝ 18 կգ կշռով գործունեությունը Հայաստանին՝ Երեւանի Եղիշե Զարեցի անվան գրականության եւ արվեստի ինստիտուտին հանձնելու նպատակով:

«50 տարվա երաժշտական կյանքս Հայաստանի համար էր, հայության համար էր: Իմ գործունեությունը օտարության մեջ չէր արժեւորվի, այն պետք է պահվի հայրենի-

քում, եւ ես իմ ամբողջ կյանքը հանձնեցի Հայաստանին», - ասում է մաեստրոս, ում հետ զրուցելու առիթն ունեցանք:

Ժան Ալմուխյանը ծնվել է 1932թ. հոկտեմբերի 6-ին Բուենոս Այրես քաղաքում: 1947թ. տեղափոխվել է Բուենոս Այրես, որտեղ ստացել է երաժշտական կրթություն հանրահայտ երաժիշտների մոտ: 1957-ից հիմնել է տեղի «Հայ երաժշտության բարեկամներ» ընկերությունը եւ «Արաքս» երգչախումբը:

«12 հայ, 48 արգենտինացի՝ երգչախումբը ձեւավորվել է այս կազմով: Մեծ ջանք է պահանջվել՝ հայերին նոտաներին ծանոթացնելու, իսկ արգենտինացի խմբակիցներին հայերենի արտասանությանը վարժեցնելու համար: Մեկ տարին չանցած երգչախումբը հանդես եկավ անդանիկ համերգով: Ծանաչում ստանալուց հետո երգչախմբի կազմն ընդլայնվեց. հայերի թիվը դարձավ 55», - ասում է Ժ.Ալմուխյանը եւ նշում, որ Արգենտինայում երգչախումբը հիմնելու գաղափարը հայապահպանության խնդիր էր հետապնդում՝ հայ ազատագրական եւ ժողովրդական երգերի միջոցով արգենտինահայությունը ծանոթանում էր նաեւ հայոց պատմությանը:

Երգչախումբը երգում էր 7 լեզուներով՝ հայերեն, իսպաներեն, ռուսերեն, անգլերեն, իտալերեն, հունարեն եւ գերմաներեն՝ դասական եւ ժողովրդական կատարումներ: Բազմազանության շնորհիվ հենց «Արաքս» երգչախմբին ընծայվեց Արգենտինայի ձայ-

նաբանների եւ երաժիշտների միջազգային հերթական ժողովի բացման եւ փակման հանդիսավոր արարողություններին հանդես գալու հնարավորությունը:

«800 խմբերից ընտրեցին հենց մեզ՝ պրոֆեսիոնալ եւ բարձրաճաշակ երաժշտության եւ կատարումների շնորհիվ», - ասում է երգչախմբի ղեկավարը եւ նշում, որ երգչախումբը կատարել է շուրջ 400 հայկական, արգենտինական եւ այլ ազգերի երաժշտություններ, հանդես եկել համերգային շրջապայություններով Մերձավոր Արեւելքում, Հարավային Ամերիկայում, Իրանում եւ Եվրոպական մի շարք երկրներում, արժանացել նաեւ պետական պարգևների ու մրցանակների:

5 տարի առաջ բժիշկներն արգելեցին մաեստրոյին՝ զբաղվել երգչախմբի ղեկավարությամբ: «Արաքս» երգչախումբը լուծարվեց, սակայն անդամների միջեւ ընկերական հարաբերությունները պահպանվում են:

Երգչախմբային, կամերային, սիմֆոնիկ երգեր, մեներգեր, ջութակի կոնցերտ, դաշնամուրային երգեր, հայ բանաստեղծների տեքստերով խմբերգեր հեղինակած կոմպոզիտոր Ժան Ալմուխյանը գրիչը մի կողմ չի դրել: Այսօր նա շարունակում է երաժշտություններ գրել Հայաստանի կատարողների համար:

«Զեմ կարող ասել, թե ինչպես է ստեղծվում երաժշտությունը. ես էլ չգիտեմ: Բայց, նախ մտքում թեման է ի հայտ գալիս, որը

պետք է զարգացնել, հետո 1, 2, 3 նոտա՝ 100-ից 1 ներշնչում, 100-ից 99-ը քրտինք բանաձեւով, - ասում է Ժ.Ալմուխյանը եւ նշում, որ երաժշտությունը արվեստների թագուհին է, - ամեն արվեստ կարող է շոշափել. կոնկրետ է՝ նկար, արձան, գիրք: Միայն երաժշտությունը չես կարող «բռնել». այն օդում է, եւ պետք է զգալ»:

Ժան Ալմուխյանի անցած ստեղծագործական երկար ուղին արժեւորվել է 1972թ. Մեծի Տանն Կիլիկիո հորեն Ա. Կաթողիկոսի կողմից՝ «Սբ. Մեսրոպ Մաշտոց», իսկ 1982 թվականին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին Վեհափառի կողմից՝ Հայ եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշաններով: 1987թ. արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության եւ Հայաստանի կոմպոզիտորների միության Կոմիտասի անվան մրցանակի, 2013թ.՝ ՀՀ «Մովսես Խորենացի» շքանշանին:

Արգենտինահայ կոմպոզիտորն իր ստեղծագործությունների մեջ ձգտել է ձգտում է հայ ժողովրդի երաժշտության առանձնահատկությունները համարել ժամանակակից եվրոպական երաժշտության արտահայտչաձևերին՝ ստեղծագործական կապ պահպանելով հայրենի երաժիշտների հետ:

«Հենց երաժշտությունն է զարդարում եւ գեղեցկացնում կյանքը, սովորեցնում, բացատրում եւ ուղղություն տալիս դեպի լուսավորը», - ասում է Ժան Ալմուխյանը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Թատրոնում գրվող հեքիաթը՝ բարի վերջաբանի ակնկալիքով



Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի կողքով անցնելիս նկատելի է շենքի տարածքում տիրող իրարանցումը, լսելի՝ Ռուբեն Յախվերդյանի «Մեր սիրո աշունը» երգը թատրոնի պահակի՝ շենքի պես հին ու փոքրիկ սենյակից: Շենք մուտք գործելուն պես հանդիպում են շուրջ 15 կամավորի, ովքեր՝ մեկը ավել, մյուսը բահ, մեկ ուրիշը լամպիկներ ձեռքին թեթեւաշարժ այս ու այն կողմ են շտապում: Թատրոնի շենքի տարածքում տիրող այս անսովոր երեւոյթը պատճառ ունի. հոկտեմբերի 5-ից 7-ը «ARTSakh Fest» ժամանակակից արվեստի փառատոնն է:

Շքամուտքում «խոստովանություններ» ինտերակտիվ նախագիծն է՝ նախընտրական տեղամասի տեսքով: Փառատոնի համակարգող Իննա Բաղդասարյանը շտապում է բացատրել, որ ընտրական շտաբի նմանօրինակով նախագիծը միտված է մարդկանց ազատելու իրենց ներսում թաքցրած տագնապներից և հույզերից: Մենախցում թղթին հանձնելով անհանգստություն պատճառող երեւոյթները՝ դրանցից գրկվելու, իսկ համապատասխան կախիչից «ընտրությունը» կախելը՝ հասարակության առջեւ բաց և ճշմարիտ լինելու առաջին քայլերն են:

Խոստովանության մենախցում հայտնվելը նման է թատերական ներկայացման գնալուն. առաջին դեպքում ավիդ մեջ է քո ներաշխարհը, արժեքները, զգացմունքները, երկրորդի դեպքում սեփական արժեքների և գործողությունների դիտորդն են:

Շքամուտքին հաջորդում է թատերասրահը կամ «383 հոգի»-ն: Նախագիծը ժամանակակից արվեստագետ Վահրամ Գալստյանինն է: 383-ը թատերասրահի նստարանների թիվն է, ավելի ճիշտ՝ նստարաններին փակցված լամպիկների տեսքով հանդիսատեսի թիվն է, որի կա-

րոտն ունի Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնը:

«Փառատոնին պետք է այլ աշխատանքով ներկայանայի, սակայն թատրոնի թատերասրահը հուշեց և թելադրեց հանդիսատես ապահովել: Ես էլ որոշեցի այդ հանդիսատեսին վառ պատկերել՝ լամպիկների միջոցով, որոնց զոդելու գործին անհրաժեշտ եղավ ավելի քան 10 օր», - նշել է Վահրամ Գալստյանը:

Մուրճի ձայնը թատերասրահին հաջորդող սենյակից է գալիս: Կամավորներից մեկն է երկաթե բարակ ձողեր ամրացնում առաստաղին: Վաղն այդ ձողերից կկախվեն թատրոնում ստեղծված 300-ից ավելի բեմադրություններից պահպանված որոշ թատերական զգեստներ՝ ներկայացումների նկարների ներքո:

Երկրորդ հարկում է գտնվում երաժշտության ու պարի սենյակը: Սենյակի անկյունում դրված դաշնամուրը երաժշտության ձայն է լսել վաղուց: Դաշնամուրը, թատրոնի մյուս բնակիչներն ու արցախցիները երաժշտություն կլսեն վաղը՝ հոկտեմբերի 5-ին. ժամը 19:00-ին՝ Արտո Թուևջոյանյանին, իսկ հոկտեմբերի 7-ի երեկոյան՝ Միքայել Ոսկանյանին:

Երկրորդ հարկի մյուս երեք փոքրիկ սենյակները երկու շվեյցարացի արվեստագետի ոգեշնչման աղբյուրը դարձան՝ ներկայացնելու Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի անցյալը, ներկան ու ապագան:

Անցյալն առաջին սենյակում է. դռան փոքրիկ պատուհանից կցուցադրվեն թատրոնում բեմադրված ներկայացումների տեսագրությունները:

Ներկան երկրորդում է՝ բորբոսով պատված, նեխած, փտած կահույքով:

Երրորդը ապագայի սենյակն է, որը դեռեւս մութ է, բայց սենյակի կենտրոնում կախված փոքրիկ կանթեղը ապագայի նկատմամբ հույս է ներշնչում:

Յենց այս հույսով է Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում այս օրերին գրվում 1930-ականներին կառուցված այս շենքի անավարտ պատմության հեքիաթը: Յենքի գլխավոր հեղինակը Երեւանի ժամանակակից արվեստի ինստիտուտի ծրագրերի ղեկավար Աննա Կամայն է՝ Արցախի, Յայաստանի և արտերկրի շուրջ 30 ժամանակակից արվեստագետների մասնակցությամբ: «ARTSakh Fest» ժամանակակից արվեստի փառատոնը նպատակ ունի ստեղծել համագործակցության բեմադրական դրսի արվեստագետների և կազմակերպությունների հետ՝ մեկ անգամ ևս սեւեռելու բարի մարդկանց ուշադրությունը դեպի «Ստեփանակերտի գեղեցկուհի» երբեմնի տեսքն ու փառքը վերականգնելու վրա:

Յոկտեմբերի 5-ի երեկոյան Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքում ազդարարվել է «Artsakh Fest» ժամանակակից արվեստի փառատոնի մեկնարկը: Փառատոնի բացման արարողությանը ներկա էին ԱԶ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբո-

ժ գաղափարի իրականացման ճիշտ վայրը:

«Այստեղ մարդիկ ապրում, ստեղծագործում և երազում են, կա հսկայական պոտենցիալ, բայց, ցավոք, դեռ չկան հարթակներ, որոնք կաշխատեն այդ պոտենցիալի հետ՝ նպաստելով Արցախը զարգացող մշակութային կենտրոն դարձնելուն: Թատրոնը համախմբման մի տարածք է, որտեղ խոսքը և գործողությունը միասնաբար են ներկայանում: Շուրջ 7 տարի վթարային ճանաչված այս շենք մուտք գործելու մեր փառատոնային միջամտությունը թատրոնը կառուցվածքային ու բովանդակային առումով վերականգնելուն միտված մի քանակ է», - նշել է Ա.Կամայնը՝ շեշտելով, որ թատրոնը կարող է հանդիսանալ ժամանակակից արվեստի նախագծերի մշակման և արտադրության բաց կենտրոն, մարդկանց և գաղափարների խաչաձեւ մի ցանց:

Ժամանակակից արվեստի փառատոնի կազմակերպման շրջանակներում մաքրվել և բարեկարգվել է թատրոնի շենքն ու շրջակա տարածքը: Շենքը էլեկտրաֆիկացվել է, իսկ շենքի հարակից տարածքում տեղադրվել են աղբա-



աշրջության նախարար Լեռնիկ Յովհաննիսյանը, ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, պատգամավորներ, Արցախից, ՀՀ-ից ու արտերկրից ժամանած արվեստագետներ:

Ժամանակակից արվեստի փառատոնին մասնակցել են Արցախի, Յայաստանի և արտերկրի շուրջ 30 արվեստագետ: Փառատոնի ծրագիրը ներառում է հետազոտական ցուցահանդես, բացօթյա համերգներ, պերֆորմանսներ, ձայնային արվեստ (sound art), տեսանկար (video art), հանրային արվեստ և այլն:

Ողջունելով ծրագրի գաղափարն ու իրականացումը՝ Լեռնիկ Յովհաննիսյանը կարեւորել է ժամանակակից արվեստի միջոցով թատրոնի շենքի խնդրի հանրահռչակումը: «Այսքան արվեստագետների ներկայությունը, ամբողջությունը բերելու է նրան, որ մենք ունենալու ենք շատ լավ դրամատիկական թատրոնի շենք, որի բեմում երազելու են խաղալ լավագույն դերասանները», - նշել է Լեռնիկ Յովհաննիսյանը՝ հավելելով, որ դրան կարող ենք հասնել ամենօրյա միասնական աշխատանքով:

Փառատոնի նախաձեռնող Աննա Կամայնը նշել է, որ Արցախի Մարտունի քաղաքում մոտ 7 ամիս ապրելու ընթացքում է առաջացել մշակութային նախաձեռնություն սկսելու գաղափարը, իսկ Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի լքված շենքը տեսնելով՝ գտել

մաններ: Երեւանի ժամանակակից արվեստի ինստիտուտի տնօրեն Նազարեթ Կարոյանը նշել է, որ այս նախաձեռնությունը հոգու և սրտի միջականության տարածությունում է արվում:

«Թատրոնը Ստեփանակերտի սիրտն է և հոգեւոր եւոյթունը: Մենք խոսում են սրտի շարժման մասին, որը կմիացնի մարդկանց և վառ կպահի ոգեւորությունը, երեւակայությունը և ստեղծագործականությունը: Արցախի կամավորները միացել են այս նախաձեռնությանը, տեր են կանգնել իրենց սրտին: Արվեստը պետք է դառնա արցախցիների սրտի շարժիչը», - ասել է Նազարեթ Կարոյանը և նշել, որ այդ ստեղծագործականությունը վառ պահելու նպատակով փառատոնի վերջում թատրոնի շենքը լուսավորվելու է դրսից՝ վերադարձնելով քաղաքին Ստեփանակերտի լավագույն շինությունը՝ բովանդակային և ճարտարապետական իմաստով:

Նախագծի հովանավորներն են ԱԶ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը, ԱԶ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարությունը, Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանը, Թուֆենյան հիմնադրամը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ



Պետականության վերականգնում 100

Համազասպը Թիֆլիսում. Վերադարձ Երեւան (1919թ. մարտ հունիս)

/հատվածներ/

...Որոշ ժամանակ անց Համազասպն ակտիվորեն ներգրավվում է Թիֆլիսի հայ հասարակական-քաղաքական կյանքում: Այդ օրերին թիֆլիսահայությանը հուզող առաջնային խնդիրը Արցախի ճակատագիրն էր: 1919թ. հունվարի 15-ին Արցախ-Չանգեզուրում ստեղծվել էր գեներալ-նահանգապետություն, եւ անգլիացիների հովանավորությամբ նահանգապետ էր նշանակվել հայտնի հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովը, որի իշխանությունն ամրապնդելու պատրվակով 1919թ. փոտրվարին եւ ապրիլին ադրբեջանական զորքերը ներխուժեցին Արցախ: Հայ բնակչությունը ցույց տվեց համառ դիմադրություն: Սուլթանի զորքերն ու շուրջ երկու հազար քուրդ ավազակներ ոչնչացրին մի շարք հայկական գյուղեր: Այս վայրենի գործողություններին մասնակցում էին նաեւ բրիտանական միսիայի ղեկավար Մաք-Մոզլիի հնդիկ մահմեդական զինվորները: Մաք-Մոզլիի պահանջով, անգլիացի սպաների եւ հնդիկ զինվորների ուղեկցությամբ, Արցախից վտարվում են Ազգային խորհրդի նախագահ Ե. Իշխանյանը, ռազմական գործերի ղեկավար Հարություն Թումյանը եւ Ասատուր Ավետիսյանը:

Արցախահայության նկատմամբ իրականացվող բռնաճնշումների առիթով այդ օրերին փոթորկվել էր Այսրկովկասի եւ Ռուսաստանի հայությունը: Արցախահայությանը նեցուկ կանգնելու նպատակով Թիֆլիսում, Հոկտ. Թումյանյանի նախագահությամբ, հունիսի 8-ին եւ 22-ին տեղի էին ունենում բազմահազարանոց հրապարակային ժողովներ: Թիֆլիս հասած Ե. Իշխանյանը, Հ. Թումյանը եւ Ա. Ավետիսյանը, մտահոգ Արցախում տիրող ծանր կացությամբ, պարբերաբար հրավիրում էին Չանգեզուր-դարաբաղցիների հայրենակցական միության վարչության նիստեր՝ փորձելով հարցը բարձրացնել Փարիզում, դաշնակիցների դիվանագիտական բարձրագույն ատյանում:

Արցախի շուրջ ստեղծված ծանր կացությունը հուզում էր նաեւ Համազասպին: 1919թ. հունիսի 7-ին հայոց ակումբում հրավիրված Չանգեզուր-դարաբաղցիների հայրենակցական միության վարչության հերթական նիստին, որտեղ պետք է քննարկվեր Շուշիում տիրող կացության հարցը, մասնակցում է նաեւ Համազասպը: «Յունիսի 7-ին երեկոյան, որոշեալ ժամին գնացիք հայոց ակումբ. Առանձին մի սենեակում հաւաքւած էին արդէն Լեօն՝ վարչութեան անդամները եւ հրաւիրեալները...: Ներկայ էին նաեւ Միշա Արզումանեանը, Աշ. Մ. Յովսէփեանը եւ խմբապետ Համազասպը», - գրում է Ե. Իշխանյանը:

Միաժամանակ, ձգտելով իր ուժերի ներածին չափով օգտակար լինել նորանկախ Հայաստանի Հանրապետության կերտման, մասնավորապես՝ բանակի կազմավորման գործին, Համազասպը մտադրվում է Թիֆլիսից անցնել Երեւան: 1919թ. հունիսի 15-ին Համազասպն արդէն Երեւանում էր:

Թիֆլիսից Երեւան գալով՝ Համազասպն անմիջապես դիմում է ՀՀԴ Արեւելյան Բյուրոյին ու ՀՀ կառավարությանը եւ հայտնում իր պատրաստակամությունը՝ ... իր ուժերը ի սպաս դնելու Ղարաբաղին, ստանձնելով որոշ պարտականութիւններ, ակտիւ կերպով աշխատելու, համաձայն կառավարութեան եւ կուսակցութեան հրամանագրերի: Բյուրոն, հունիսի 17-ին քննության անցնելով Համազասպի դիմումը, տարակարծության պատճառով որոշակի եզրահանգման չի գալիս՝ նկատի ունենալով, ... Բազւայ կռիւների ժամանակ նրա դէմ եղած որոշ գանգատներն ու դժգոհութիւնները»:

ՀՀԴ Բյուրոյի նման որոշումը մտահոգել էր Համազասպին: Այս մասին արժեքավոր տեղեկություններ է

հայտնում Ե. Իշխանյանը, որը Հ. Թումյանի եւ Ասատուր Ավետիսյանի հետ մեկտեղ խորհրդարանի այգում գրուցել էր Համազասպի հետ: «Պառլամենտի դիմաց, զբոսայգում երեքով պատահեցինք Համազասպին, - գրում է Ե. Իշխանյանը, - որը խիստ ընկճած դէմքով միացաւ մեզ, եւ միասին տեղ գրաւեցինք այգում...»: Համազասպը նրանց պատմում է, որ դիմել էր մի շարք ընկերների՝ իրեն աջակցելու ՀՀԴ Բյուրոյի եւ կառավարության մոտ, զինվորական պաշտոն ստանձնելու եւ, առաջին հերթին, Արցախին օգտակար լինելու համար, կամ «եթէ հնարաւոր չլինի այդ, ծառայելու մէկ ուրիշ շրջանում»:

Հունիսի 20-ին Ա. Գյուլիսանյանյանը, Գեորգ Ղազարյանը եւ Սարգիս Արարատյանը Ե. Իշխանյանի հետ գրույցի ընթացքում հարցնում են վերջինիս Համազաս-



պին Արցախ գործուղելու օգտակարության մասին: Ե. Իշխանյանը նպաստավոր չէր համարում Համազասպին Արցախ գործուղելը՝ համարելով, որ նրա ներկայությունն էլ ավելի կտրի Ադրբեջանի կառավարության հետ հարաբերությունները: Նրա կարծիքով՝ Համազասպի ներկայությունն Արցախում նպաստավոր կլինի միայն Ադրբեջանի հետ պատերազմի դեպքում: «Համազասպը... Ղարաբաղում ամենաճանաչւած խմբապետն է եւ Գիւլիստանի գաւառներում: ... Ղարաբաղի թուրքերը խստիւ ակնածում են Համազասպից, եւ վերջինիս այնտեղ լինելը պիտի աւելի սրէ Ադրբեջանի եւ մեր կառավարութեան փոխարաբերութիւնը, որից օգուտ չունենք ներկայիս: Հայաստանը պատերազմի մէջ չէ Ադրբեջանի հետ, եւ եթէ նման պատերազմ ծագելու լինի, այն դեպքում Համազասպի Ղարաբաղ անցնելը խիստ օգտակար կը լինի մեզ համար. Նա կը կարողանայ մեծ ոգեվորութիւն առաջ բերել ժողովրդի մէջ», - գրում է Ե. Իշխանյանը:

Սակայն իրավիճակը շարունակում էր ծայրաստիճան լարված մնալ Արցախում: Սուլթանովը, արցախահայության վճռակալությունից գազազած, հայ բնակչության նկատմամբ շարունակում էր իր չարագործությունները: Ուստի ՀՀ կառավարությունը որոշեց Ար-

ցախ ուղարկել զինվորական գործիչների, որոնց առջեւ խնդիր դրվեց կազմակերպել տեղի հայության ինքնապաշտպանությունը: Այդ նպատակով Ե. Իշխանյանը, Հ. Թումյանը եւ Աթանես Ղահրամանյանը հանդիպում են Սեպուհի հետ, առաջարկում են նրան մեկնել Արցախ եւ ստանձնել ինքնապաշտպանության ղեկավարությունը: Սեպուհը մերժում է այդ առաջարկը՝ պատճառաբանելով, որ ինքը տեղանքին ծանոթ չէ, եւ առաջարկում է Համազասպի թեկնածությունը, քանի որ նա մեծ ճանաչում էր ժողովրդավարությունը եւ վայելում Արցախում: «Ձեր երկրին Համազասպն է ծանոթ, եւ իմ կարծիքով ամէնից յարմարը նա է, որ անցնի Ձեզ մօտ», - ասել էր Սեպուհը: Ե. Իշխանյանը Սեպուհի հետ կայացած գրույցի մասին գրավոր ձեռով հայտնում է ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին: Այդ ժամանակ Համազասպը Արցախ մեկնելու համար գրությամբ կրկին դիմել էր Ռուբենին եւ պատրաստակամություն հայտնել, ... իւր ուժերը ի սպաս դնելու Ղարաբաղի հայությանը»:

Հարցը կարգավորելու նպատակով ՀՀ զինվորական նախարարը Ե. Իշխանյանին առաջարկում է կազմել մի ամփոփագիր՝ Արցախում Համազասպի 1905-1906 թթ. գործունեության մասին: Ե. Իշխանյանը, Հ. Թումյանն ու Ա. Ավետիսյանը միահամուռ կարծում են, որ դա «... լաւ առիթ է, պետք է գրաւոր կերպով յայտնել իրողութիւնը, որ նա հեղինակութիւն է Ղարաբաղում, մանաւանդ Խաչէնի, Ջրաբերդի եւ Գիւլիստանի գիւղացիութեան մէջ, որ փաստ է»: Ե. Իշխանյանը եւ վերը նշված գործիչները հատուկ գրությունով Ռուբենին ներկայացնում են Համազասպի՝ Արցախում 1905-1906թթ. ծավալած արդյունավետ գործունեության մանրամասները, եւ եզրակացնում, որ անհրաժեշտաբար պետք է օգտագործել նրա՝ Արցախում ունեցած հեղինակությունը: Ըստ Ե. Իշխանյանի՝ «Արդ նկատի ունենալով անցեալը, որ մոռացւած չէ ժողովրդի կողմից եւ այն հանգամանքը, որ ի չարս արեւելեան ժողովուրդների, մեր ժողովրդի աչքում արժեք ունեն առաւելապէս հեղինակութիւն դարձած անունները, ուստի երեքով՝ Յարութիւն Թումանեանը, Ասատուր Աւետիսեանը եւ ես պաշտպանել ենք Համազասպին օգտագործելու հարցը... պիտի ասեմ, որ երեքս էլ բնաւ չէինք մեղանչել իրականութեան դէմ»: Համազասպը հունիսի 29-ին «Զաղաքային բուլվար»-ի մուտքի մոտ պատահաբար հանդիպելով վերջիններիս, իր գոհունակությունն է հայտնում ասելով՝ «Շատ զգացւած եմ, դուք փրկեցիք իմ պատիւը...»:

Արցախ գործուղվելու փոխարեն 1919թ. հուլիսի առաջին օրերին նա նշանակվում է Երեւանի նահանգի ամենաընդարձակ Նոր Բայազետ գավառում տեղակայված զորամասերի հրամանատար՝ այդ պաշտոնում փոխարինելով գեներալ-մայոր Պողոս (Պավել) Բեկ-Փիրումյանին: ՀՀԴ Արեւելյան Բյուրոյի՝ 1919թ. հուլիսի 4-ի նիստի օրակարգային 4-րդ հարցի՝ «Համազասպին պաշտօն տալու խնդրի» վերաբերյալ ասված է. «Համազասպին արդէն պաշտօն տրուած է»: Համազասպն այդ պաշտոնը զբաղեցրեց մինչու 1920թ. հեկտեմբերի 5-ը:

Այսպիսով, Թիֆլիսից անցնելով Երեւան, այնտեղից՝ Նոր Բայազետ, Համազասպը ստանձնեց հույժ կարեւոր նշանակություն ունեցող զինվորական Նոր պաշտոն, որով եւ սկիզբ դրվեց նրա գործունեության հիմնաքարը:

Գեորգ Ստեփանյան
«Համազասպ»
Երեւան-2016թ.